

Բարոյագիտութեան ոլորտէն ներս, 20-րդ դարու ընթացքին, զարգացան.-

1. **Նիւթական Արժեքի Բարոյագիտութիւնը** (Material Value-Ethics),
2. **Մետա-Բարոյագիտութիւնը** (Meta-Ethics),
3. **Ընկերա-քաղաքական բարոյագիտութիւնը** (Social-Political Ethics),
4. **Վերլուծական Բարոյագիտութիւնը** (Analytic Ethics),
5. **Քննախօսութեան Բարոյագիտութիւնը** (Discourse Ethics) եւ
6. **Բարոյագիտութեան Նոր Ուղիներ.-**
 - **Բնապահութեան բարոյագիտութիւնը** (Environmental Ethics),
 - **Տնտեսական բարոյագիտութիւնը** (Business Ethics) եւ
 - **Բժշկական բարոյագիտութիւնը** (Medical Ethics):

Այժմ անդրադառնանք 20-րդ դարու փիլիսոփայութեան նոր ուղղութիւններուն, որմէ ետք պիտի ներկայացուի 20-րդ դարու բարոյագիտութիւնը:



1. ԵՐԵՒՈՒԹԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Երեւութաբանութիւն (Phenomenology) փիլիսոփայական ուղղութեան հիմնադիրն է գերման փիլիսոփայ **Է. Հուսերլ** (Edmund Husserl, 1859 – 1938 թ.): Փիլիսոփայական այս ուղղութիւնը, մարդկային գիտակցութեան վերլուծումի միջոցով, կը կեդրոնանայ նոյնիսկ *երեւոյթին* (Phenomenon) վրայ: Այլ խօսքով, այս ուղղութեան նպատակը՝ զուտ առարկայական (Objective) *երեւոյթն* է, ինչպէս որ կայ, որպէս Էութիւն՝ զուտ գիտակցութեան մէջ, առանց անհատի կամ ենթակայի (Subject) դատողութիւններուն, դիտումնաւորութեան (Intentionality) կամ դիտումնաւոր գիտակցութեան: Հուսերլի համաձայն, դիտումնաւորութեան գլխաւոր սկզբունքը ակնբերութեան (Evidence) ձգտումն է: Ասոր կողքին, որպէս հիմնական սկզբունք, Հուսերլ կը յիշէ՝ *երեւութաբանական վերածումը* (Phenomenological Reduction) եւ *Էութեան վերածումը* (Eidetic Reduction): Հուսերլի երեւութաբանութեան մասին գլխաւոր երկերը կը նկատուին.- երկու հատորով «*Տրամաբանական հետազոտութիւններ*» (1900 թ., գերմ. բնագիր՝ „Logische Untersuchungen“, անգլ.՝ „Logical Investigations“), «*Փիլիսոփայութիւնը որպէս խիստ գիտութիւն*» (1910 թ., գերմ. բնագիր՝ „Philosophie als strenge Wissenschaft“, անգլ.՝ „Philosophy as Rigorous Science“) եւ երեք հատորով «*Գաղափարներ զուտ երեւութաբանութեան եւ երեւութաբանական փիլիսոփայութեան համար*» (1913 թ., գերմ. բնագիր՝ „Ideen zu einer reinen Phänomenologie und phänomenologischen Philosophie“, անգլ.՝ „Ideas Pertaining to a Pure Phenomenology and to a Phenomenological Philosophy“):

Երեւութաբանութիւնը, իր երեւոյթներու ձեւական նկարագրութեամբ դարձաւ իմացաբանութեան միջոց եւ կիրարկելի նաեւ այլ ճիւղերու մէջ, ինչպէս ընկերաբանութիւն, հոգեբանութիւն, եւայլն...: